ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՓՆԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

10.07.2023թ.

«Մարկ շին գրուպ» ՍՊԸ և «Ար-Աշ» ՍՊԸ կոնսորցիում

«Մարկ շին գրուպ» ՍՊԸ գործադիր տնօրեն Ս. Զաքարյանին

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Արագածոտնի մարզի «Ափնայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և «Մարկ շին գրուպ» ՍՊԸ և «Ար-Աշ» ՍՊԸ կոնսորցիումի միջև «16» մարտի 2023թ. Կնքված պայմանագրին կից համաձայնագրով (կնքված 18.04.2023թ-ին.) N ՀՀԱՄ-ԱՓՆԱ-ՄԴ-ԳՀԱՇՁԲ -23/01 պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի կատարման վերջնաժամկետն է ս/թ. հունիսի 17-ը:

Սակայն պայմանագրով սահմանված ժամկետում ստանձնած պարտավորությունները չեն կատարվել ձեր կոնսորցիումի կողմից:

Հիմք ընդունելով վերոգրյալը և Պայմանագրի 8.11 կետը՝ Արագածոտնի մարզի «Ափնայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը միակողմանի լուծում է Արագածոտնի մարզի «Ափնայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և «Մարկ շին գրուպ» ՍՊԸ և «Ար-Աշ» ՍՊԸ կոնսորցիումի միջև «16» մարտի 2023թ. կնքված N ՀՀԱՄ-ԱՓՆԱ-ՄԴ-ԳՀԱՇՁԲ -23/01 պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ տեղկացնում ենք, որ պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը պատվիրատուի կողմից պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

-սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

-Այսպիսով, «Մարկ շին գրուպ» ՍՊԸ և «Ար-Աշ» ՍՊԸ կոնսորցիումին տրվում է 5 /հինգ/ բանկային օր՝ տուժանքներով սահմանված որակավորման՝ 571293 /հինգ հարյուր յոթանասունմեկ հազար երկու հարյուր իննսուներեք/ դրամ և պայմանագրի 380862 /երեք հարյուր ութսուն հազար ութ հարյուր վաթսուներկու/ դրամ ապահովումների գումարները Արագածոտնի մարզի «Ափնայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Կենտրոնական գանձապետարանի Հ/Հ 900458000073 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

-Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն, «Մարկ շին գրուպ» ՍՊԸ և «Ար-Աշ» ՍՊԸ կոնսորցիումին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազորված մարմին, իսկ Կապալառուի կողմից պայմանագիր կնքելու նպատակով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով, կներկայացվեն Կապալառուի բանկ՝ նշված գումարները գանձելու նպատակով:

ՏՆՕՐԵՆ՝ Ս. ՀԱԿՈԲՅԱՆ